ՈՍՍԿ

«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քահանայարի
Դեպի տրակ

Երևան-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈԱԱԿ-Ը 2021 ԹՎԱԿԱՆԻՆ՝ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ 4

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 7

1. Բարձրագույն կրթական համակարգ 7

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 7

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 11

Բուհերի՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր 11

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ 11

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 12

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 13

4. Մշտադիտարկումներ 14

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան 16

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

1. Աշխատաժողովներ ՄՈՒՀ-երի համար 17

2. Վերապատրաստումներ, կարողությունների զարգացման միջոցառումներ ՄՈՒՀ-երի համար 17

3. Փորձագետների վերապատրաստումներ 18

4. Կլոր-սեղան քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ 19

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ 19

6. «Ուսանողության ձայն» նախագիծ 20

7. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում 21

ԶԼՄ–ի միջոցով հաղորդակցություն 21

Հաղորդակցություն ՈԱԱԿ պաշտոնական կայքի միջոցով 21

Շահակիցների հետ հաղորդակցությունը Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով 21

Վիճակագրական տվյալներ 21

III. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 22

1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում 22

Հավատարմագրման գործընթացների վերլուծություն 23

Մարդկային ռեսուրսների կառավարում 25

ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախությունը 27

2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գնահատման գործընթացներ 28

3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 29
IV. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 30
1. Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն 30
2. Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի աշխատանքային խմբերին մասնակցություն 31
3. Միջազգային ծրագրեր 31
ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր 31
Էրազմուս + DEQAR CONNECT ծրագիր 32
Էրազմուս+ (SMARTI) ծրագիր 32
2. Տարածաշրջանային համագործակցություն 33
V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 33

ՈԱԱԿ-Ը 2021 ԹՎԱԿԱՆԻՆ՝ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ

Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խթանում մասնագիտության կրթական ծրագրերի մակարդակում

- Ինստիտուցիոնալ հավատարմագրումների առանցքում շարունակել է մասնագիտական որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ մեխանիզմների բացահայտումը և կրթական ծրագրերի խորքային ուսումնասիրությունները փորձագետների կողմից:
- Իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրումների ընթացքում ուսումնասիրվել են շուրջ 70 մասնագիտության կրթական ծրագրեր, որի արդյունքում բուհերը ստացել են խորհրդատվություններ բարելավումների ուղղությամբ: Շարունակվել են ծրագրային մշտադիտարկումները, որի արդյունքում ուսումնասիրվել են 10-ը բուհերի շուրջ 20 մասնագիտությունների կրթական ծրագրեր և խորհրդատվություններ են տրամադրվել բարելավման ուղղությամբ:
- Կազմակերպվել են կրթական ծրագրերի որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ աշխատաժողովներ, որի արդյունքում բուհերի ներկայացուցիչները կիսվել են ՄԿԾ-ների բարելավումների իրենց փորձառությամբ: Մասնակցել են տարբեր բուհերի շուրջ 100 ներկայացուցիչներ:
- ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում ՄՈՒՀ-երը շարունակել են լրացնել տվյալներ իրականացվող ՄԿԾ-ների վերաբերյալ, որոնք դիտարկվել են մշտադիտարկումների արդյունքում:
- Իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն ծրագրային հավատարմագրման արդյունավետ մոդելի դուրս բերելու նպատակով:

Փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում ՀՀ-ում

- Ուսուցման որակի արդյունավետ մոդելի դուրս բերման նպատակով իրականացվել են շուրջ 85 մասնագետների վերապատրաստումներ:
- Փորձագիտական բազայի ոլորտային մասնագետներով համալրման նպատակով իրականացվել են ոլորտային մասնագետների կարողությունների զարգացման միջոցառումներ:
- Շարունակվել է ուսանող-փորձագետների կարողությունների զարգացումը, որի արդյունքում վերապատրաստվել են շուրջ 85 ուսանողներ ՀՀ տարբեր մարզերից:

Շահակիցների նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցության ու համագործակցության խթանում

- ՈԱԱԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսավորմամբ փորձարկել և իրականացրել է բուհերում ներքին կարողությունների ձևավորումը խթանող միջոցառումներ, որը, ըստ շահակիցների, արդյունավետ մոդել է բարեփոխումների, խմբերի ձևավորման և բուհը արտաքինից՝ շահակցի տեսանկյունից, դիտարկելու համար:
- Հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել ԿԳՄՍ նախարարության, ՄԿՈՒ հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ հավատարմագրման ընթացքում առաջ եկած խնդիրները պարզաբանելու և լուծման ճանապարհներ գտնելու համար:
- Հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել բուհերի որակի կենտրոնների պատասխանատուների հետ՝ ՄԿԾ-ների որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների դուրս բերման նպատակով:
- ՈԱԱԿ-ը շարունակել է զարգացնել շահակիցների փորձի փոխանակման հարթակը, որտեղ քննարկվում են ոլորտում առկա լավագույն փորձը և մարտահրավերները:
- Հանդիպումներ են տեղի ունեցել «Կրթության կառավարում», «Կրթության կազմակերպում» և «Կառավարում» մասնագիտությունների ուսանողների և շրջանավարտների հետ, որի արդյունքում ՈԱԱԿ-ը համալրել է իր աշխատակազմը:

Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահունչության ապահովում

- ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ «Բարձրագույն կրթության և գիտության» մասին ՀՀ օրենքի նախագծում որպես պարտադիր պահանջ ներառվել է ծրագրային հավատարմագրումը: Պարտադիր ծրագրային հավատարմագրման պահանջը երկու տարբերակ է առաջարկում բուհերին՝ իրականացնել ՄԿԾ-ների ինքնագնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին կամ ծրագրային հավատարմագրման համար դիմել ՈԱԱԿ-ին:
- Վերանայվել է ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը:
- Մշակվել և հաստատվել է մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկման քաղաքականությունը:
- Մշակվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի ապահովման և պետական հավատարմագրման կարգի նախագիծը:
- Մշակվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի ապահովման և պետական հավատարմագրման կարգի նախագիծը:
- Մշակվել և հաստատվել է Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգը:

Միջազգային լավագույն փորձին և մշակույթին կրթության համապատասխանության խթանում

- Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրին վերանդամակցելու նպատակով իրականացվել է ՈԱԱԿ-ի ինքնավերլուծությունը:
- ՈԱԱԿ-ը ներգրավվել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի աշխատանքներին. Որակի ապահովման և որակավորումների ճանաչման աշխատանքային խմբերում:
- ՈԱԱԿ-ը շարունակել է իր ակտիվ մասնակությունը Էրազմուս+ եվրոպական ծրագրերում՝ խթանելով որակի մշակույթի տարածումը և միջազգային լավագույն փորձի տեղայնացումը:
- ՈԱԱԿ-ը շարունակել է տարածաշրջանում իր համագործակցությունները՝ մանակցելով հավատարմագրումների, սեմինաների և վեբինարների:

ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները

- Քննարկվել և վերանայվել են ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովմանը նպաստող որակի տիրույթները:
- Աշխատակազմի ամենօրյա հանդիպումների արդյունքում ՈԱԱԿ-ի նոր աշխատակիցները ներգրավվում են իրականացվող գործընթացներում:
- ՈԱԱԿ-ը շարունակում է աշխատանքներ իրականացնել հավատարմագրման գործընթացում ներգրավված համակարգողների կարողությունների զարգացման ուղղությամբ՝ կազմակերպելով ընթացիկ մի շարք հանդիպումներ և փորձի փոխանակումներ:
- Նոր համակարգողներ ներգրավելու նպատակով «Ուսանողության Ձայն» նախագծի վերապատրաստումներում լավ արդյունքներ ցուցաբերած ուսանողները հավատարմագրման գործընթացներում ներգրավվում են որպես համակարգողի օգնական:

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Բարձրագույն կրթական համակարգ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

2021 թվականին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ նախատեսել էր իրականացնել հետևյալ բարձրագույն ուսումնական հաստատություններում.

- Արցախի պետական համալսարան,
- Երևանի պետական համալսարան,
- Գորիսի պետական համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Երևանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն:

Հաշվետու տարվա ընթացքում, համավարակի պատճառով ստեղծված սահմանափակումներով պայմանավորված, հավատարմագրման որոշ գործընթացներ իրականացվել են հիբրիդային կամ առցանց տարբերակով՝ ուսումնական հաստատությունների հետ քննարկումների արդյունքում: Գործընթացները կազմակերպվել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և իրականացման ընթացակարգի դրույթներին համապատասխան:

Հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունները ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում ներկայացրել են ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում խորությամբ դիտարկվող մասնագիտության կրթական 3 ծրագրերի 5-ական դասընթացների և ավարտական աշխատանքների պաշտպանության ձայնագրություններ՝ առցանց եղանակով իրականացված:

Ռեսուրսների դիտարկման համար հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունները էլեկտրոնային տարբերակով ներկայացրել են առկա կրթական ռեսուրսների, բոլոր ենթակառուցվածքների տեսաձայնագրությունները, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, որոնք սովորաբար դիտարկվում էին այցի ընթացքում: Հիբրիդային ձևաչափով հավատարմագրման իրականացման դեպքում տեղացի փորձագետները այցելել են ուսումնական հաստատություններ, տեղում դիտարկել ենթակառուցվածքներն ու ռեսուրսները, իրականացրել են դասալսումներ: Միջազգային փորձագետին տրամադրվել են ռեսուրսների դիտարկման համար նախատեսված տեսանյութերը, քանի որ նրանց մասնակցությունը տեղի է ունեցել առցանց եղանակով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձաքննություններն իրականացվել են փորձագիտական խմբերի կողմից, խմբերը ձևավորվել են ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան: Փորձագիտական խմբում ընդգրկվել են տեղացի, միջազգային փորձագետներ և ուսանող-փորձագետներ ՈԱԱԿ-ի փորձագետների բազաներից:

Հաշվետու տարում փորձագետներ են ներգրավվել հետևյալ կազմակերպություններից.

- Նիդերլանդների «Ավրորա» համալսարանական ցանց,
- Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն,
- Լեհաստանի հավատարմագրման հանձնաժողով,
- Ֆրանսիայի Կլերմոն Օվերն համալսարան,
- Բելգիայի «Կրթության և որակի ապահովման եվրոպական ռեսուրսներ» ընկերություն,
- Բելգիայի Բրյուսելի մենեջմենթի դպրոց:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են մի շարք հայաստանյան բուհերից, մասնավորապես.

- Երևանի պետական համալսարան,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Շիրակի պետական համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարան,
- Եվրոպական համալսարան,
- Հայաստանի ամերիկյան համալսարան,
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
- Հյուսիսային համալսարան:

Ինստիտուցիոնալ առցանց եղանակով հավատարմագրման համար կիրառվել են ZOOM հարթակի հնարավորությունները, այդ թվում թարգմանության գործառույթը:
Առցանց եղանակով հավատարմագրումներ իրականացվել են ըստ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի, որի ընթացքում.

1. իրականացվել են ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն, առցանց դասալսումներ, ուսումնական գործընթացի դիտարկումներ և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ,
2. կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները,
3. փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որտեղ մասնավորապես շեշտադրվել է առաջիկայում բուհերի կողմից բոլոր կրթական ծրագրերի ներքին գնահատման իրականացումը: Թերությունների վերացման ծրագրերը գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2021 թվականին ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ Աղյուսակ 1-ում ներկայացված 13 բուհի և 10 ՄՄՈՒՀ-ի վերաբերյալ:

2021 թվականին հավատարմագրված բուհեր

Աղյուսակ 1

	Հաստատության անվանումը	**Շնորհված հավատարմագրումը**
1	ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
2	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
3	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
4.	Հայկական բժշկական ինստիտուտ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
5.	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
6.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
7.	«Եվրոպական համալսարան»	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
8.	Երևանի «Գլաձոր» համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
9.	Գորիսի պետական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
10.	Արցախի պետական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով

11.	Ավանդական բժշկության համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
12.	Շուշիի տեխնոլոգիական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
13.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա	բողոքի մասին որոշումը թողնել անփոփոխ

Հավատարմագրված քոլեջներ

Աղյուսակ 2

	Հաստատության անվանումը	**Շնորհված հավատարմագրումը**
1	Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ /քոլեջ/	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
2	Արարատի պետական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
3	Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
4.	Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
5.	Ստեփանավանի պրոֆեսոր Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
6.	Գորիսի պրոֆ. Խ.Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
7.	Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով

8.	Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
9.	Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
10.	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել հավատարմագրման պետական գրանցամատյանում:

Բուհերի՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր

2020-2021 թթ. հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները, հետևելով Հավատարմագրման կարգի պահանջներին, ՈԱԱԿ են ներկայացրել փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի որոշման հիման վրա բուհերը վերանայել են իրենց ներկայացրած պլանները՝ ներառելով բոլոր կրթական ծրագրերի բարելավումների և ծրագրերի ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ դրույթներ:

Հավատարմագրման կարգի համաձայն՝ 4 կամ 6 տարի հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները 2 տարին մեկ անգամ, իսկ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ, պարտավոր են իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

Նախատեսված ժամկետներում 2021թ. հաշվետվություններ են ներկայացրել ՀՀ ՊՆ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանը և ՀՀ պետական կառավարման ակադեմիան:

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է աշխատանքներ իրականացնել ծրագրային հավատարմագրման գործընթացները պարտադիր դարձնելու ուղղությամբ: ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ընդգրկվել է պարտադիր ծրագրային հավատարմագրումը՝ բուհերի կողմից ծրագրերի ինքնագնահատման և արդյունքները ՈԱԱԿ–ի Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությամբ:

Նոր օրենքի վերջնական ընդունումից հետո ծրագրային հավատարմագրումը պարտադիր կլինի ՀՀ-ում գործող բոլոր բուհերի ՄԿԾ–ների համար. համաձայն օրենքի նախագծի անցումային դրույթների ՄԿԾ–երը պետք է հավատարմագրվեն մինչև 2025 թ.:

Բուհերին ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստելու նպատակով ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլում ՈԱԱԿ-ն ավելի մանրամասն է դիտարկում մասնագիտական կրթական ծրագրերը: ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումները բուհերի և փորձագետների համար նույնպես միտված են այդ կարողությունների զարգացմանը: ՈԱԱԿ-ը կարևորում է վերապատրաստումները և նմանատիպ միջոցառումները ՈԱԵՉՈՒ իրականացման տեսանկյունից:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական բարելավումը խրախուսելու և ծրագրային հավատարմագրման նախադրյալներ ստեղծելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ շրջափուլի ընթացքում փորձագետները շարունակել են ուսումնասիրել հավատարմագրման ենթակա բուհերում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի մեծ մասը, դիտարկվել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Փորձագիտական այցերի ընթացքում իրականացվել են մասնագիտական զրույցներ ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ ներկայացված երեք ՄԿԾ-ների շրջանակներում:

2021 թ. իրականացված 6 ինստիտուցիոնալ հավատարմագրումների շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել է շուրջ 36 մասնագիտության կրթական ծրագիր:

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

Որակի մշակույթը հաստատություններում ամրապնդելու նպատակով հաշվետու տարում ՈԱԱԿ-ը կազմակերպել և մասնակցել է ոլորտի շահակիցների հետ քննարկումների և կլոր սեղանների, իրականացրել է փորձագետների և ՄԿՈւհատատությունների աշխատակիցների վերապատրաստումներ, որոնք նպաստում են որակի մշակույթի տարածմանը և հիմքեր են ստեղծում ոլորտի բարեփոխումների համար:

ՄԿՈ հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի ներդրման գործընթացները նպաստել են ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտմանը, ՄԿԾ-ների բարելավման մեխանիզմների ձևավորմանը և պարբերականության ապահովմանը, ինքնավարության մեծացմանը և գործատուների հետ համատեղ և կիրառելի ռազմավարության ձևավորմանը: Ընդ որում վերջինիս հետ կապված դրական դինամիկա է նկատվում Դուալ կրթական ծրագրեր ունեցող ՄԿՈ հաստատություններում:

ՈԱԱԿ-ը շարունակում է խթանել ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը ՄԿԾ-ների բարելավման, կառավարման, ռեսուրսների հայթայթման և այլ գործընթացներում: Չնայած նրան, որ կառավարման գործընթացում կիրառման մեջ է դրվում ՊԻԳԲ շրջափուլը, սակայն դեռևս ակնառու չեն գնահատման և բարելավման գործընթացները:

Տվյալների հավաքագրումը և դրանց վերլուծությունը սկսում է դառնալ հենք որոշումների կայացման գործընթացում, սակայն այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են, անհրաժեշտություն կա հավաքագրելու վավեր և կիրառելի տեղեկատվություն, որոնք որոշումների կայացման գործընթացը կդարձնեն առավել հիմնավոր, իսկ ռիսկերն առավել՝ կառավարելի:

Դեռևս ՄԿՈւհաստատությունների համար շարունակվում է մարտահրավեր մնալ դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված մասնագիտական վերապատրաստումների ծրագրերի հայթայթումը և մասնակցությունը, երիտասարդ դասախոսների ներգրավումը:

ՄԿՈւ հաստատությունների իրավակազմակերպական ձևը և դրա սահմանափակումները դեռևս հնարավորություն չեն տալիս ՄԿՈւ հաստատություններին իրականացնել առևտրայնացման գործընթաց, իսկ բյուջեի գերակա մասը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից և պետական ֆինանսավորումից (95% և ավելի):

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

2021 թվականին ՈԱԱԿ-ն իրականացրել է հինգ պետական ՄԿՈւ հաստատությունների հավատարմագրում պետական ֆինանսավորման շրջանակներում: Ուսումնական հաստատությունների ընտրության նպատակով ՈԱԱԿ-ը շարունակել է իրականացնել տվյալների հավաքագրում հաստատություն-գործատու համագործակցության, իրականացվող կրթական ծրագրերի, գործատու-դասախոսների, ուսանողների թվաքանակի վերաբերյալ: ՄԿՈւ հաստատությունների ընտրության հիմքում ընկած են եղել վերը նշված ցուցիչները:

Վերլուծությունների և ԿԳՄՄՆ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում ընտրվել են հետևյալ միջին մասնագիտական 5 ուսումնական հաստատությունները՝

- Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ,
- Վայոց ձորի տարաշրջանային պետական քոլեջ,
- Արարատի պետական էներգետիկական քոլեջ,
- Դիլիջանի պետական բժշկական քոլեջ,
- Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ:

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացին ՄԿՈւհաստատություններին պատրաստելու նպատակով ՈԱԱԿ-ն իրականացրել է վերը նշված հաստատությունների աշխատակիցների (յուրաքանչյուր ուսումնական հաստատությունից 2-ական աշխատակից) վերապատրաստումներ՝ շեշտադրելով ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների մեկնաբանությունները և ինքնավերլուծության իրականացման տրամաբանությունը և տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և ներկայացումը:

ՄԿՈւ հաստատությունների փորձագիտական ներուժի և ինքնավերլուծություն իրականացնելու կարողություն ձևավորելու նպատակով, ՈԱԱԿ–ը ՄԿՈւ հաստատությունների SWOT վերլուծությունները դիտարկել է այդ հաստատություններից ընտրված երկու աշխատակիցների հետ միասին:

Աշխատակիցներն ընտրվել են ուսումնական հաստատությունների կողմից՝ հաշվի առնելով նորարական և ստեղծագործական մտածողությունը, մասնագիտական առարկաներ դասավանդելը և ոլորտում ունեցած փորձառությունը:

Վերապատրաստումից և SWOT վերլուծությունների դիտարկումներից հետո, ՈԱԱԿ-ն իրականացրել է մեկօրյա առցանց այց, որի նպատակն է եղել ձևավորել որակի ապահովման խմբեր, որոնք կմասնակցեն ինքնավերլուծության իրականացմանը:

Առցանց այցերի արդյունքում ՈԱԱԿ համակարգողների կողմից կազմվել են հաշվետու զեկույցներ՝ ամփոփելու արդյունքները և դուրս բերելու հաստատությունների ուժեղ և բարելավման ենթակա կողմերը:

Սահմանված ժամանակացույցի համաձայն՝ ուսումնական հաստատություններն իրականացրել և ՈԱԱԿ-ին են ներկայացրել ինքնավերլուծությունները, որից հետո ՈԱԱԿ-ը կազմել և հաստատությունների հաստատմանն է ներկայացրել փորձագիտական խմբերի կազմը:

Փորձագիտական խմբերի ընտրության համար կազմակերպվել են վերապատրաստումներ: Եթե նախորդ տարիներին փորձագիտական բոլոր խմբերում ղեկավարներն ընտրվում էին բուհական համակարգից՝ հաշվի առնելով նրանց փորձաքննություն իրականացնելու կարողությունը, ապա հաշվետու տարում փորձ իրականացվեց նաև խմբերում ընդգրկել ղեկավարներ ՄԿՈ ոլորտից, քանի որ արդեն որպես խմբի անդամներ նրանք մասնակցել էին հավատարմագրման գործընթացների և նրանց մոտ որոշակիորեն ձևավորվել էր փորձաքննություն իրականացնելու կարողություններ: Փորձագիտական խմբերի մնացյալ անդամները նույնպես մեծամասամբ եղել են ՄԿՈ ոլորտի ներկայացուցիչներ:

Հաշվետու տարում փորձագիտական այցերը տեղի են ունեցել դեմ առ դեմ եղանակով, չնայած նրան, որ տեղի են ունեցել փորձագիտական այցերի հետաձգումներ՝ պայմանավորված COVID-19 համավարակի տվյալ շրջանում լայն տարածման հետ: Փորձագիտական խմբերն իրականացրել են առցանց դասալսումներ, դիտարկել են կրթական ծրագրերը և ուսանողներին տրվող հանձնարարականները, պրակտիկաները, ինչպես նաև հանդիպումներ են ունեցել քոլեջների տարբեր շահակիցների հետ: Ամփոփելով արդյունքները՝ պատրաստվել են փոձագիտական զեկույցները և ներկայացվել են ուսումնական հաստատություններին և ԿԳՄՍ նախարարությանը:

Հաշվետու տարում ԿԳՄՍՆ-ում հանդիպումներ են տեղի ունեցել ԿԳՄՍՆ ներկայացուցիչների և նախորդ հավատարմագրված ՄԿՈ հաստատությունների ղեկավար կազմերի հետ, որի նպատակն է եղել դուրս բերել հավարմագրման ուժեղ և բարելավման ենթակա կողմերը, պարզաբանելու խնդրահարույց հարցերը: Հանդիպումների արդյունքում պլանավորվել է վերանայել հավատարմագրման գործող իրավակարգավորումները և հավատարմագրման չափանիշները:

4. Մշտադիտարկումներ

Մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության որակի բարելավման մշակույթի անընդհատ զարգացումն ապահովելու և շնորհիվող որակավորումների արժանահավատությանը նպաստելու համար՝ ՈԱԱԿ-ը

շարունակաբար մշտադիտարկումներ է իրականացնում հավատարմագրված և դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած ուսումնական հաստատություններում: Հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում դիտարկվում են նախորդ հավատարմագրումից հետո բուհի արձանագրած առաջընթացը, բուհերի թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքը, որակի ապահովման համակարգի կողմից բացահայտված լավագույն փորձը, բուհում դեռևս առկա մարտահրավերները, ինչպես նաև դրանց հաղթահարման ուղիները: Ծրագրային մշտադիտարկումների ընթացքում առանձնակի խորությամբ դիտարկվում են մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ շեշտադրելով ուսանողների առաջընթացն ապահովող նախադրյալները, պրոֆեսորադասախոսական կազմի և վերջնարդյունքների ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ու ռեսուրսների ապահովման քաղաքականությունը:

Դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած քոլեջներում և բուհերում դիտարկվում է որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքը, ներդրման հետ կապված դժվարությունները և նախորդ մշտադիտարկումից հետո ունեցած առաջընթացը: Այս գործընթացների իրականացումն ապահովում է ոլորտի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, որը հիմք է հանդիսանում հետագա որոշումների կայացման համար: Սա նաև լրացուցիչ հնարավորություն է հաստատության համար՝ պատրաստվելու իր առաջիկա հավատարմագրման գործընթացին:

2021 թվականին ՈԱԱԿ-ն իրականացրել է 30 մշտադիտարկում, որոնցից 10-ը՝ քոլեջներում: Մշտադիտարկված քոլեջների թվում էին նաև 2021-2022 թվականներին հավատարմագրման նախապատրաստվող քոլեջները:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ոլորտային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ մշտադիտարկման գործընթացներում ներգրավվել են նաև ոլորտային փորձագետներ, հավատարմագրման հանձնաժողովի անդամներ, ինչը հնարավորություն է տվել առավել խորքային ուսումնասիրություններ անելու և կրթական ծրագրերի վերաբերյալ համապարփակ քննարկումներ կազմակերպելու:

Մշտադիտարկումների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ՄՈՒՀ-երի ներքին շահակիցների՝ ղեկավար կազմի, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների, ուսանողների և որակի ներքին ապահովման պատասխանատուների հետ: Կատարվել է փաստաթղթային ուսումնասիրություն, իսկ մշտադիտարկման այցի ավարտին հաստատությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները, բացահայտված լավագույն փորձը և դեռևս առկա խնդիրները:

Մշտադիտարկման արդյունավետության գնահատման, գործընթացների հետագա բարելավման նպատակով՝ վերջին 3 տարիներին մշտադիտարկված բուհերի և քոլեջների շրջանում իրականացվել են հարցումներ և քննարկումներ:

Վերլուծության արդյունքում մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից առանձնացված ազդեցության դրույթներն են.

- Մասնակիցները կարևորել են մշտադիտարկման ազդեցությունը մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման վրա՝ նպաստելու շնորհիվող որակավորումների արժանահավատությանը:
- Հաստատությունները սկսել են տվյալներ հավաքագրել, ներդրել են տվյալների հավաքագրման մեխանիզմներ, էլեկտրոնային կառավարման գործիքներ՝ ընդունելով մշտադիտարկման ընթացքում առաձնացված խորհրդատվությունը կառավարչական որոշումները կայացնել հավաստի և հուսալի տվյալների հիման վրա:
- Համավարակով պայմանավորված առցանց և հիբրիդային կրթության իրականացման ընթացքում մշտադիտարկման արդյունքում ավելացել է ուսանողներին տրվող հետադարձ կապը, փոփոխվել են գնահատման մեթոդները՝ համապատասխանեցվելով ուսումնառության մեթոդներին:
- Բուհերը հնարավորություն են ունեցել ստանալու արձագանք թերությունների վերացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝ գնահատելու առկա մարտահրավերները, թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքը, նախապատրաստվելու առաջիկա հավատարմագրումներին:
- Հստակեցվել են հաստատությունների զարգացման ուղղությունները՝ դրանք կապելով երկրի զարգացման առաջնահերթություններին:
- Ծրագրային մշտադիտարկումները վերհանել են կրթական ծրագրերում առկա խնդիրները, հիմքեր նախապատրաստել ծրագրային հավատարմագրման իրականացման համար՝ նպաստելով որակի մշակույթի տարածմանը ոչ միայն ինստիտուցիոնալ, այլ նաև ծրագրային մակարդակում:

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան

Կարևորելով մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը՝ հաշվետու տարում նույնպես հավատարմագրման գործընթացում գտնվող մասնագիտական ուսումնական հաստատությունները շարունակել են էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների հավաքագրման շտեմարանի լրացումը՝ ներկայացնելով տվյալներ և ցուցանիշներ ուսանողների և շրջանավարտների, դասախոսական կազմի, մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական ռեսուրսների, որակի ապահովման համակարգի արդյունավետության վերաբերյալ:

Ներկայումս էլեկտրոնային շտեմարանում իր տվյալներն է լրացրել շուրջ75 մասնագիտական ուսումնական հաստատություն:

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշխատաժողովներ ՄՈՒՀ-երի համար

Համավարակի շարունակականությամբ պայմանավորված՝ 2021թ.-ին շահակիցների համար աշխատաժողովներ կազմակերպվել են Zoom հարթակի միջոցով: Աշխատաժողովներ հիմնականում իրականացվել են քոլեջների տնօրենների և նորանշանակ ՈԱ աշխատակիցների համար, հավատարմագրմանը պատրաստվող բուհերի և քոլեջների աշխատակիցների համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման քոլեջների ընտրության համար իրականացվել է հարցաշարի միջոցով տվյալների հավաքագրում՝ գնահատելով քոլեջ-աշխատաշուկա կապը: Հարցաշարի լրացումից հետո հանդիպում է տեղի ունեցել ՀՀ ԿԳՄՄՆ Մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետի հետ, այնուհետև հանդիպում է կազմակերպվել լավագույն ցուցանիշ ցույց տված քոլեջների ներկայացուցիչների հետ:

2. Վերապատրաստումներ, կարողությունների զարգացման միջոցառումներ ՄՈՒՀ-երի համար

Հաշվետու տարվա ընթացքում ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների համար կազմակերպվել է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 4 դասընթաց: Ընդհանուր առմամբ վերապատրաստվել են 76 մասնակից՝ հիմնականում քոլեջներից: Վերապատրաստումները իրականացվել են «Որակի ապահովման համակարգի ներդրում. ինստիտուցիոնալ ինքնավերլուծության իրականացում» թեմայի շրջանակում:

Վերապատրաստումների արդյունավետության գնահատման տվյալներով՝ մասնակիցների 82%-ը բավարարված է վերապատարաստումների արդյունքներից: Ըստ մասնակիցների՝ վերապատրաստումների արդյունքում պատկերացում են կազմել հավատարմագրման գործընթացի, որակի ներքին ապահովման համակարգի զարգացման ուղիների վերաբերյալ: Գնահատման այդպիսի բարձր ցուցանիշն ապահովվել է վերապատրաստման ծրագրերի անընդհատ բարելավման, ինչպես նաև ՈԱԱԿ-ի թիմի և ՄՈՒՀ-երի համագործակցության արդյունքում:

Բուհերի ներկայացուցիչների համար նախատեսվում է կազմակերպել վերապատրաստումներ մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման համատեքստում: Դրա հետ կապված ձևավորվել է աշխատանքային խումբ, ուսումնասիրվել են թիրախային թեմաներն ու մեխանիզմները:

Հաշվետու տարված ընթացքում, ՈԱԱԿ-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տրված ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացումը ՀՀ բուհերում» նախագիծը 4 բուհերի համար (Հայաստանում ֆրանսիական համալսարան, Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան, Հյուսիսային համալսարան):

«Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացումը ՀՀ բուհերում» նախագծի նպատակն է եղել բուհերի ներկայացուցիչների մոտ ձևավորել ինքնավերլուծություն իրականացնելու կարողություններ, ձևավորել բարեփոխումների խմբեր: Ծրագրի նպատակներից էր ձևավորել կարողություններ ներքին շահակիցների մոտ դիտարկելու իրենց բուհերի զարգացումը արտաքին շահակիցների տեսանկյունից:

Այդ նպատակով իրականացվել են աշխատաժողովներ չորս բուհերի շուրջ 50 մասնակիցների համար՝ ինքնավերլուծություն պատրաստելու և բուհը արտաքին միջավայրից դիտարկելու համար:

Նախագծի արդյունքները ներկայացվել են ամբողջ բուհական համակարգին՝ ամփոփիչ համաժողովի ընթացում:

Նախագծի յուրանքանչյուր փուլի ավարտից հետո կատարված արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ կարողությունների զարգացման նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տվել բուհերին բացահայտելու իրենց ուժեղ կողմերը, ինչպես նաև բարելավման ենթակա ուղղությունները: Ըստ շահակիցների՝ նախագիծը հաջողություն է ունեցել, քանի որ նպաստել է հետևյալ կարողությունների զարգացմանը.

- ներքին խնդիրներին քննադատաբար վերաբերվելու,
- խնդիրներին նորարական լուծումներ փնտրելու,
- բոլոր գործընթացները դիտարկել արդյունքահեն տեսակետից,
- թերությունների բոլոր հնարավոր հետևանքները դիտարկելու ունակություն,
- և այլն:

3. Փորձագետների վերապատրաստումներ

Հավատարմագրման ընթացքում հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում ապահովելու, ինչպես նաև փորձագիտական բազան պարբերաբար համալրելու նկատառումով ՈԱԱԿ-ն իրականացնում է փորձագիտական վերապատրաստումներ: 2021թ. ընթացքում փորձագիտական վերապատրաստումներին մասնակցել են ՄՈՒՀ-երից թվով 55 աշխատակից, որոնցից 34-ը բուհերի փորձագետներ են, 21-ը՝ քոլեջների:

Փորձագետների հավաքագրման քաղաքականությունը հնարավորություն է տալիս դիֆերսիֆիկացվածց աղբյուրներից ներգրավել փորձագետներ: Մասնավորապես.

- ըստ որակավորման ընդգրկվում են ՈԱԱԿ փորձագիտական բազայում գրանցվածները,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության խմբերում ներգրավված աշխատակիցները,
- հրավիրվում են հավատարմագրման գործընթացներում մասնակցած փորձագետների երաշխավորությամբ,
- հրավիրվում են ուսանող-փորձագետների երաշխավորմամբ,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ՈԱ ղեկավարի երաշխավորությամբ,

- ընտրվում են ՈԱԱԿ-ում կլոր-սեղանների /թեմատիկ, ոլորտային/անցկացման արդյունքում,
- ընտրվում են ՄՈՒՀ-երում ՊԴ կազմի և կառավարիչների հետ անցկացվող ֆոկուս-խմբերի արդյունքում,
- ներգրավվում են ՈԱԱԿ-ում այլ թեմաներով վերապատրաստմանը մասնակցած մասնագետները,
- հրավիրվում են իրենց իսկ դասավանդման փորձը հետազոտող և դրա վերաբերյալ հոդվածներ հրապարակած դասախոսները,
- հրավիրվում են գիտության ոլորտում հայտնի մասնագետները,
- ներգրավվում են ՄՈՒՀ-երի հետ ակտիվ համագործակցող գործատուները:

Փորձագետների վերապատրաստման ծրագրում շեշտադրվում են ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների կառավարման արդյունավետության գնահատման մեխանիզմները, որոնք հասանելի են շահակիցներին և փաստում են որակավորումների արժանահավատ շնորհումը:

Իրականացված վերապատրաստումների արդյունավետության գնահատման տվյալներով վերապատրաստվողների մոտ 89%-ը բավարարված է անցկացվող վերապատրաստումներից: Վերապատրաստման մասնակիցները կարևորել են վերապատրաստման ընթացքում կիրառվող հանձնարարությունը, որի արդյունքում մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից դասավանդվող առարկան և արձագանք ստացել վերապատրաստման այլ մասնակիցներից:

4. Կլոր-սեղան քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ

Շահակիցների հետ գործընկերային համագործակցությունը ընդլայնելու նկատառումով ՈԱԱԿ-ն առցանց եղանակով կազմակերպել է կլոր-սեղան քննարկումներ ինչպես բուհերի, այնպես էլ ՄԿՈ հաստատությունների ներկայացուցիչների հետ:

2021թ. առցանց եղանակով կազմակերպվել է ՄԿԾ բարելավման լավ փորձի քննարկում-հանդիպում, որտեղ բուհերից 2 բանախոս ներկայացրել են ՄԿԾ-ների բարելավման կոնտեքստում իրենց լավ փորձը, ծավալվել է քննարկում բուհերի տարբեր ներկայացուցիչների միջև: Առցանց հանդիպմանը մասնկցել են ՀՀ բուհերից շուրջ 100 ներկայացուցիչ: Նմանատիպ քննարկում-հանդիպումների կարևորությունից ելնելով՝ նախատեսվել է ապահովել նման հանդիպումների շարունակականությունը:

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ՄԿՈհաստատությունների ՈԱ պատասխանատուների հետ: Քննարկումները ծավալվել են ՄԿՈ հաստատությունների հիմնական խնդիրների, դրանց լուծման գործում որակի ներքին ապահովման համակարգի դերակատարման շրջանակում: Թեմատիկ հանդիպում-քննարկումների ընթացքում դիտարկվել են ՄԿՈ հաստատություններում առկա խնդիրների լուծման ճանապարհները:

Առցանց եղանակով հանդիպումներ են կայացել բուհերի ՈԱ կառույցների պատասխանատուների, աշխատակիցների հետ, քննարկվել են ՄԿԾ-ների որակի ապահովման և բարելավման գործընթացները:

6. «Ուսանողության ձայն» նախագիծ

ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագիծը 2011 թվականից սկսած իրականացնում է ուսանող-փորձագետների վերպատրաստումներ՝ ուսանողների շրջանում հետաքրքություն առաջացրած արդիական թեմաների, խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, թեմատիկ վերլուծություններ:

Ուսանող-փորձագետների բազայում ընդգրկված է «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետի դասընթացին մասնակցած շուրջ 500 ուսանող: Ուսանողները մասնակցում են հավատարմագրման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ, կամ ներգրավվում են գործընթացներում որպես պասիվ դիտորդ, համակարգողի օգնական, ներգրավվում են նաև մշտադիտարկման գործընթացներում: Հավատարմագրման գործընթացներում մասնակցած ուսանող-փորձագետները ներգրավվում են նաև իրենց ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման գործընթացներում, մասնակցում են ինքնավերլուծության կազմմանն ու ՄՈԻՀ-երում իրականացվող տարբեր հարցումների կազմակերպմանն ու արդյունքների վերլուծությանը:

Հաշվետու տարվա ընթացքում բացի դեմ առ դեմ իրականացվող դասընթացներից, օգտագործելով առցանց գործիքները՝ հիբրիդային և ամբողջապես առցանց տարբերակով շարունակվել են դասընթացները ներառելու ուսանողներ նաև տարբեր մարզերից ու շրջաններից:

Հաշվետու տարվա ընթացքում վերապատրաստվել են շուրջ 85 ուսանող տարբեր բուհերից և ՄԿՈՒ հաստատություններից:

«Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպվել են նաև տարբեր բուհերի և քոլեջների ուսանողների հետ հանդիպումներ՝ նվիրված ուսումնառության առանձնահատկություններին, խնդիրներին, բուհերում առկա լավագույն փորձին:

Շարունակվել են պարբերական հանդիպումները «Կրթության կառավարում», «Կառավարում», «Հանրային կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների և ՈԱԱԿ մասնագետների մասնակցությամբ: Ամենամյա հանդիպումների ժամանակ քննարկվում են ուսանողների կողմից բարձրաձայնվող խնդիրները, կրթական համակարգի բարեփոխումները, ուսանողների առաջարկները տարբեր խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Ապագա կրթության կառավարիչների հետ հանդիպումների ժամանակ ներկայացվում են նաև ՈԱԱԿ-ում իրենց հետագա կարիերայի, աշխատանքային փորձառության հնարավորությունները: Նախագծի, որակի ապահովման գործընթացներում հետաքրքրություն և ակտիվություն դրսևորած ուսանողները աշխատանքի հնարավորություն են ստանում ՈԱԱԿ-ում:

7. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում

ԶԼՄ–ի միջոցով հաղորդակցություն

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է համագործակցությունը տեղական ԶԼՄ–ի հետ: ՈԱԱԿ-ի գործունեության, ընթացիկ աշխատանքների և կրթական այլ օրակարգեր ներկայացվել են «ՇԱՆԹ» հեռուստաընկերության «Առավոտը Շանթում» ծրագրի, Շողակաթ հեռուստաընկերության «Տաղավարում» հաղորդման շրջանակներում: Կրթության ոլորտի հիմնախնդիրներին անդրադարձ է կատարվել Repat Riarch Vlog-ի շրջանակներում, ինչպես նաև ՈԱԱԿ-ը մասնակցել է Արցախի հանրային հեռուստաընկերության կողմից հրավիրված հարցազրույցին:

Հաղորդակցություն ՈԱԱԿ պաշտոնական կայքի միջոցով

ՈԱԱԿ կայքէջի միջոցով լուսաբանվել են հավատարմագրման, մշտադիտարկման գործընթացները, ՈԱԱԿ–ի կողմից կազմակերպված աշխատաժողովները, վերապատրաստումները և համաժողովները, հանդիպումները տեղական և միջազգային գործընկերների հետ և այլ գործընթացներ: Համապատասխանաբար լրացվել և թարմացվել են կայքի մնացած բաժինները. մասնավորապես՝ ըստ անհրաժեշտության թարմացվել է Ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյանը, Հավատարմագրում, Հրապարակումներ, Նորություններ, Մեր մասին բաժինները՝ իրենց ենթաբաժիններով:

Իրականացվել են հարցազրույցներ ՈԱԱԿ մասնագետների և փորձագետների հետ՝քննարկելու մշտադիտարկումների, մասնագիտական կրթական ծրագրերի կառավարման, բուհական համակարգում CRM համակարգերի կիրառման ազդեցությունը և կրթության ոլորտի ժամանակակից միտումներն աշխարհում:

Շահակիցների հետ հաղորդակցությունը Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով

Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով ապահովվել է ՈԱԱԿ-ի գործունեության լուսաբանումը՝ սկսած աշխատանքային հանդիպումների, ընթացիկ և սպասվելիք հավատարմագրումների, մշտադիտարկումների, աշխատաժողովների, վերապատրաստումների լուսաբանումից մինչև միջազգային գործընկերների հետ համագործակցություն: Հրապարակվել են նաև կրթական բնույթի օգտակար նյութեր, ՈԱԱԿ–ի կողմից իրականացված հետազոտության արդյունքներ, ուղեցույցներ և հայտարարություններ:

Վիճակագրական տվյալներ

2021թ. ՈԱԱԿ կայքում հրապարակվել է 76 լուր, 5 հարցազրույց, 6 հայտարարություն, 2 ուղղորդող փաստաթուղթ: Հրապարակվել են նաև Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները, Փորձագիտական զեկույցները, համապատասխանաբար թարմացվել է նաև Գրանցամատյանը: Ըստ Google Analytics համակարգի՝ 2021թ. ՈԱԱԿ կայքէջը դիտվել է 88,122 անգամ (որը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ

25.1%–ով)։ Կայքէջի այցելուների թիվը եղել է 29,266 (որը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 28%-ով)։ Կայքէջի ամենաշատ դիտված բաժինները ըստ այցելուների՝ Հավատարմագրում, Ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյան բաժինները և կայքէջի անգլերեն տարբերակը։ ՈԱԱԿ ֆեյսբուքյան էջում կատարվել է 117 գրառում, էջի հավանումների քանակը ավելացել է 425–ով՝ հասնելով 4718 հավանության (որը նախորդ տարվա համեմատ պակասել է 30.1%–ով), էջի այցելությունների քանակը կազմել է 4605 (որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12.8%-ով)։

III. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում

ՈԱԱԿ-ի որակի ապահովումը և գնահատումը բոլոր գործողություններում ուղղված են ՈԱԱԿ-ի առաքելությանը և նպատակներին։ Որակի ներքին ապահովման քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով ՈԱԱԿ-ն իր որակի ապահովման գործընթացները համակարգում է որակի ապահովման տիրույթներով։ ՈԱԱԿ-ը 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի ներդրմամբ, ինչպես նաև ուսումնասիրությունների հիման վրա՝ հաշվետու տարում վերանայել է որակի ապահովման տիրույթները, իսկ որոշ տիրույթներ համատեղ են կառավարվում, ինչպես օրինակ՝ ՏՀՏ և ռեսուրսների կառավարում, Առաջնորդություն և մարդկային ռեսուրսներ, Քարտուղարություն և Հավատարմագրման հանձնաժողով։ Քանի որ մշտադիտարկումը դարձել է կանոնավոր գործընթաց, տիրույթը կառավարվում է առանձին։ Այժմ գործում է որակի ապահովման ինը տիրույթ, որոնք կառավարվում են մշակված պրոտոկոլներով։ Որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու համար մշակված պրոտոկոլները ներկայացնում են յուրաքանչյուր տիրույթի նպատակները, գործողությունների ծրագրերը, գնահատման ցուցիչները և որակի ապահովման գործիքները։

Հաշվետու տարում, ՈԱԱԿ-ը, յուրաքանչյուր տիրույթի որակի ապահովման համար շարունակել է իրականացնել անձնակազմի ամենօրյա հանդիպումներ, որտեղ քննարկվել են ՈԱԱԿ-ի գործունեության ընթացիկ հարցերը և խնդիրները, հանդիպումներ են տեղի ունեցել ներքին և արտաքին շահակիցների հետ՝ որի ընթացքում քննարկվել են հավատարմագրման, մշտադիտարկումների արդյունավետությունը։

Հաշվետու տարում, ՈԱԱԿ-ը կրճատել է աշխատակազմի շրջանում իրականացվող հարցումների քանակը և ավելացնել դեմ առ դեմ հաղորդակցության, մտագրոհի և ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը, հաշվի առնելով անձնակազմի փոքրաթիվ լինելը։ ՈԱԱԿ-ի աշխատակիցները լրացնում են միայն մեկ հարցում, որը հնարավորություն է տալիս SWOT վերլուծություն կատարել ՈԱԱԿ-ի յուրաքանչյուր ուղղության համար և բարելավման առաջարկություններ անել։

ՈԱԱԿ-ը, հաշվետու տարում, շարունակել է իրականացնել հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ՝ գնահատելու հավատարմագրման գործընթացների արդյունավետությունը ՄՈՒՀ-երի, փորձագետների և համակարգողների շրջանում, այդ թվում առցանց տարբերակով հավատարմագրման կազմակերպման առանձնահատկությունները գնահատելու և խնդիրները դուրս բերելու նպատակով։

Իրականացվել են նաև ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը, ինչպես նաև հավատարմագրման գործընթացների ազդեցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա:

Կատարված ուսումնասիրությունների և հանդիպումների արդյունքում ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է փաստաթղթային հենքի բարելավումներ:

Հավատարմագրման գործընթացների վերլուծություն

ՈԱԱԿ-ը 3 տարի պարբերականությամբ ձեռնամուխ է լինում կատարել համապարփակ վերլուծություն՝ ուսումնասիրելով մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կառավարման և մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) կառավարման ներկա իրավիճակը, և փորձ է կատարվում վերհանել այն գործոնները, որոնք խթանում կամ խոչընդոտում են ՄՈՒՀ-երի զարգացումը: Հաշվետու տարում ևս իրականացվել է հավատարմագրման գործընթացի համապարփակ վերլուծություն, որի շրջանակներում առաջնային կարևորություն է տրվում հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավմանը, իսկ իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերհանել լավագույն փորձը, բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու գործընթացը:

Հետազոտության միջոցով ուսումնասիրվել է՝

- որքանով է ՄՈՒՀ-երի հավատարմագրումն իրականացվել հիմնավորված, անկախ և անկողմնակալ,
- որքանով են հավատարմագրման արդյունքներն ընդունելի ՀՀ մասնագիտական կրթական համակարգի և միջազգային փորձագետների կողմից,
- որքանով են կանոնակարգերում, ՈԱԱԿ ընթացակարգերում և ձևաչափերում կատարված փոփոխությունները փոխկապակցված և հաշվի առնում գործընթացի ընթացքում առաջացող խնդիրներն և խոչընդոտները,
- որքանով է գործընթացն իրականանում Հավատարմագրման կարգի և սահմանված ժամանակացույցներին համապատասխան

Հետազոտության իրականացման համար կիրառվել է հետազոտության քանակական և որակական մեթոդներ: Հետազոտությունը միտված է եղել՝

- քանակական տվյալներով նկարագրել հավատարմագրման գործընթացի կառուցվածքային տարրերը,
- որակական տվյալներով բացատրել առկա խոչընդոտները և դրանց բարելավման հնարավոր ուղիները:

Հետազոտության համար կիրառվել են հարցաշար և ֆոկուս խմբային քննարկումներ:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը ներառում է 2018-2020թթ.: Հետազոտությանը մասնակցել են հավատարմագրման գործընթացներում ներգրավված 56 տեղացի փորձագետներ, 13 միջազգային փորձագետներ, հավատարմագրման գործընթաց անցած 9 բուհերի ներկայացուցիչներ, հավատարմագրում անցած ՄՄՈՒՀ-ների 17 ներկայացուցիչներ, 17 հավատարմագրման գործընթացների համակարգողներ և հավատարմագրման հանձնաժողովի անդամներ:

Բոլոր նշված խմբերի կողմից տրամադրված տեղեկատվությունն ընդհանրացվել է վերլուծության շրջանակներում և ներկայացվում է «Հավատարագրման գործընթացի համապարփակ վերլուծություն» փաստաթղթում:

Գործընթացների արդյունավետության գնահատումն իրականացվել է ըստ փուլերի.

1. ինքնավերլուծություն,
2. նախնական գնահատման գործընթաց,
3. փորձագիտական այց,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում,
5. բարելավմանը միտված ՄՈՒՀ-ի գործողությունների ծրագիր:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին /նորմատիվ փաստաթղթեր, ուղենիշներ, ձևաչափեր և այլն/: Բոլոր փորձագետները համարում են, որ տրամադրված փաստաթղթեր բավարար են արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար:

Գնահատվել է նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (96%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (99%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (91%):

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը:

Գնահատվել է նաև, թե ուսումնական հաստատություն կատարվող այցի ժամանակ որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (91%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (91%): Անդրադարձ է կատավել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե):

Առանձնակի ուշադրություն է դարձվել փորձագիտական զեկույցի օգտակարությանը: Մասնավորապես՝

- որքանով էր փորձագիտական զեկույցի լեզուն մատչելի (68%),
- որքանով էր փորձագիտական զեկույցը փոխկապակցված ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության հետ (95%),
- որքանով էր փորձագիտական զեկույցն արտացոլում ՄՈՒՀ-ի միջավայրի ընկալումը (63%),
- որքանով փորձագիտական զեկույցը հաշվի է առնում ՄՈՒՀ-ի պատմությունը և զարգացման հետագա ուղղությունները (79%),
- որքանով փորձագիտական զեկույցն արտացոլում է ՄՈՒՀ-ի ռազմավարությունը (71%),
- որքանով է փորձագիտական զեկույցում ճիշտ վերհանված ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերը (95%),
- որքանով է ՄՈՒՀ-ն ընդունում զեկույցում նշված թույլ կողմերը (68%),
- որքանով զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի նոր ռազմավարության վրա (80%),
- որքանով զեկույցը կարող է ազդեցություն ունենալ ՄՈՒՀ-ի վարչարարության և կառավարման վրա (94%),
- որքանով զեկույցը ՄՈՒՀ-ի համար նոր վերլուծական հնարավորություններ կարող է ընձեռնել (79%):

Առանձնակի կարևորության են արժանացել նաև փորձագետների վերապատրաստումները: Ընդհանուր առմամբ, մասնակիցները գտնում են, որ վերապատրաստումները ծառայել են իրենց բուն նպատակին՝ ապահովվել և տրամադրվել է տեղեկատվություն առաջիկա քայլերի մասին, նաև փորձագետները նշել են, որ կցանկանային, որ վերջիններս լինեն շարունակական:

Մարդկային ռեսուրսների կառավարում

2021 թվականին հաստիքացուցակի և աշխատավարձերի փոփոխություններ տեղի չեն ունեցել, պահպանվել են գործող հաստիքները՝ աշխատավարձերով, որը պայմանավորված էր 2020 թվականի արտակարգ և ռազմական դրություններով և դրանց հետևանքով պետության կողմից ֆինսնավորման ավելացում տեղի չի ունեցել: Աշխատանքի ծավալը ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թվականին մնացել է ծանրաբեռնված:

Ստորև ներկայացվում է ՈԱԱԿ 2021թ. հաստիքացուցակը՝ ըստ պաշտոնների:

ՈԱԱԿ անձնակազմ	Հաստիքներ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական և օժանդակ կազմ	12
Ընդամենը	25

Աղյուսակ 3

2021 թվականին տեղի է ունեցել տնօրենի ընտրություն, գործող տնօրենի պաշտոնավարման ժամկետի ավարտով պայմանավորված: 2021թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը մշակել և հաստատել է տնօրենի ընտրության ընթացակարգը, որտեղ ամրագրված էին տնօրենի թեկնածուին ներկայացվող պահանջները և ընտրության չափանիշները: Դեկտեմբեր ամսին տեղի է ունեցել տնօրենի բաց մրցութային ընտրություն: Դիմել է մեկ թեկնածու տնօրենի ժ/պ Ռուբեն Թոփչյանը, ով ընտրվել է ՈԱԱԿ-ի տնօրեն՝ 4 տարի ժամկետով:

2021 թվականին տեղի է ունեցել մեկ պաշտոնի (տնօրենի) ընտրություն, 5 աշխատանքի ընդունում, որից 3-ը հաստիքի համալրում, մեկ աշխատակից ընդունվել է նպատակային արձակուրդում գտնվող աշխատակցի հաստիքին և մեկ աշխատակից քաղաքացիաիրավական պայմանագրով: Աշխատանքից ազատման դիմում են գրել 2 աշխատակից:

Մարդկային ռեսուրսների կառավարման և կանոնադրական գլխավոր նպատակը՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը, արդյունավետորեն, արհեստավարժ կազմակերպելու և իրականացնելու համար, ՈԱԱԿ-ը կարևորվում է անհրաժեշտ քանակի պատրաստված համակարգողներ ունենալը: 2021թ. նախորդ տարիների նման ՈԱԱԿ-ն աշխատում է աշխատակազմից ձևավորել գործընթացի համակարգողներ: 2021թ. դրությամբ ՈԱԱԿ-ում կան գործող 7 համակարգող, որը հավատարմագրման գործընթացների շարունակականության ու կայունության ցուցանիշ է: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի աշխատակիցները շարունակել են մասնակցել միջազգային առցանց վերապատրաստումների՝ կազմակերպված Եվրոպական Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Ասոցիացիայի (ENQA) և Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) կողմից: ՈԱԱԿ-ի աշխատակազմը նաև մասնակցել է միջազգային որակի ապահովման կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին և վեբինարներին:

Յուրքանչյուր տարի, այդ թվում 2021 թվականին մարդկային ռեսուրսների արդյունքային կառավարման և կարիքների բացահայտման տեսանկյունից ՈԱԱԿ-ն անցկացնում է աշխատակիցների բավարարվածության հարցում: Հարցման ձևաչափային և որակական փոփոխություններ են արվել, առավել թիրախային հարցեր են ընտրվել՝ կոնկրետ առաջարկություններ ստանալու նպատակով:

Առ 2021թ. ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների համալրման հիմնական աղբյուրները «Ուսանողության Ձայն» նախագծում ներգրավված ակտիվություն ցուցաբերած ուսանողներն են, «Կրթության կառավարում» մասնագիտությամբ շրջանավարտները, ինչպես նաև հավատարմագրման գործընթացում ներգրավված փորձագետներ: Օրինակ՝ 2021թ. «Ուսանողության ձայն» նախագծի շրջանակներում ակտիվություն ցուցաբերած ուսանողներից մեկն ընդունվել է ՈԱԱԿ՝ որպես հանրային կապերի պատասխանատու, փորձագետներից ևս մեկը որպես մասնագետ ընդունվել է ՈԱԱԿ:

Սակայն մարդկային ռեսուրսների համալրումը չի սահմանափակվում կրթության կառավարում մասնագիտությամբ մասնագետների ներգրավմամբ, ՈԱԱԿ-ը

սկսել է քաղաքականություն մշակել բնագիտական, ինժեներական և հասարակագիտական այլ մասնագիտություններով մասնագետների ներգրավումը: Այդ ուղղությունությամբ ՈԱԱԿ-ը փնտրում է ֆինանսական աղբյուրների բազմազանեցման ուղիներ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը շարունակել է օգտվել Zoom հարթակից՝ այն դարձելով պրակտիկ գործիք գործընթացների արագ և արդյունավետ իրականացման և շահակիցների հետ շարունակական հաղորդակցության ապահովման համար: Գործընթացների հիբրիդային իրականացումը, ժամանակի և ֆինանսների խնայողությունը ապագայում ևս կլինենՈԱԱԿ գործունեության անբաժան մաս:

ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախությունը

Հիմնադրամի շարժիչ ուժը վերջինիս կայուն ֆինանսական և որակյալ մարդկային ռեսուրսներն են: Պետական հիմնադրամ լինելով հանդերձ՝ ՈԱԱԿ-ն ունի ֆինանսական անկախություն և կայունություն՝ շնորհիվ իր ֆինանսական ներհոսքերի դիվերսիֆիկացման քաղաքականության:

ՈԱԱԿ ֆինասնական քաղաքականությունը և Կանոնադրությունը սահմանում են այն ուղղությունները, որոնցով գոյանում են ՈԱԱԿ ֆինանսական ներհոսքերը, մասնավորապես.

1. բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման միջոցառումների պետական ֆինանսավորումից ներհոսքեր,
2. ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող ներհոսքեր՝ հավատարմագրումներ, վերապատրաստումներ,
3. միջազգային դրամաշնորհային ծրագրերից ֆինանսական ներհոսքեր:

ՈԱԱԿ-ը պարբերաբար գնահատում է իր տրամադրության տակ գտնվող դրամական միջոցների մեծությունն ու դրանց ազատ մասն ուղղում ավանդների ներդրմանը:

Աղյուսակ 4-ում ներկայացված են 2009թ.-ից մինչև 2021թ.-ը ՈԱԱԿ-ի դրամական ներհոսքերը՝ ըստ տեսակարար կշիռների:

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԴՐԱՄԱՆԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐՈՎ 2009-2021թթ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
Պետական ֆինանսավորումից	97.8	95.9	93.5	88.5	84.7	68.1	48.5	56.6	52.2	59.8	41.2	64.8	70.3
Հավատարմագրումներից	2.2	0.7	1.0	6.5	5.4	1.4	35.5	15.2	19.5	27.8	43.1	30.0	20.4
Վերապատրաստումներից	-	3.4	3.8	-	-	2.1	0.6	2.5	2.0	1.6	8.5	0.38	0.40
Միջազգային հանձնագործակցությունից	-	-	1.7	2.4	9.7	28.4	15.4	25.7	24.4	6.8	6.2	3.2	8.9
Այլ աղբյուրներից	-	-	-	2.6	0.2	-	-	-	2.0	4.0	1.0	1.7	-
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Աղյուսակ 4



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՈԱԱԿ-Ի ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐԻ 2009-2021ԹԹ. -ԻՆ

2020թ.-ի համեմատ պետական ֆինանսավորումից ստացված դրամական միջոցների աճը 2021թ.-ին պայմանավորված է եղել 2021-2022թթ.-ին Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցացիայի համակարգմամբ ՈԱԱԿ-ում արտաքին փորձաքննություն անցկացնելու ֆինանսավորման անհրաժեշտությամբ: 2020թ.-ին ՀՀ-ում ստեղծված ռազմական և համաճարակային իրավիճակներով պայմանավորված մի շարք բուհերի հավատարմագրման հետաձգված գործընթացների մասով 2021թ.-ին վերակնքվել են պայմանագրեր, որոնց մասով դրամական հոսքերի մուտքերն ակնկալվում են 2022թ.-ին:

Միջազգային համագործակցությունից դրամական ներհոսքերը 2020թ.-ի համեմատ 2021թ.-ին աճել են շուրջ 3 անգամ:

Ինչ վերաբերում է այլ աղբյուրներից ստացվող դրամական ներհոսքերին, ապա դրանք մեծամասամբ գոյանում են Հիմնադրամի ազատ դրամական միջոցների՝ ավանդների տեսքով տեղաբաշխումից: 2021թ.-ին ավանդի տեսքով ներդրված գումարների մասով մուքերը եղել են 2022թ.-ի սկզբին:

2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գնահատման գործընթացներ

ՈԱԱԿ-ը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ է սկսած 2017 թվականից: ՈԱԱԿ-ը ENQA-ի կողմից հավատարմագրում ստանալուց երկու տարի անց՝ ըստ նախատեսված ժամանակահատվածի, ներկայացրել է միջանկյալ առաջընթացի զեկույց: Հաջորդաբար իրականացվել է միջանկյալ այց ՈԱԱԿ: Ըստ ժամանակացույցի՝ ՈԱԱԿ-ի՝ ENQA-ի անդամակցության վերահաստատման նպատակով իրականացվող արտաքին գնահատումը նախատեսած էր 2021թ.-ին: Այդ պատճառով հաշվետու տարում մեկնարկել են ինքնավերլուծության և արտաքին գնահատման այցի նախապատրաստական աշխատանքները: Իրականացվել է Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) համաձայն ՈԱԱԿ-ի SWOT վերլուծությունը, ապա մշակվել է ինքնավերլուծության իրականացման պլանը, ձևավորվել են աշխատանքային խմբեր, իրականացվել է ESG-ի չափանիշների և ՈԱԱԿ-ի հավատարմագրման չափանիշների քարտեզագրում, և սկսվել է բուն ինքնավերլուծության գործընթացը՝ ՈԱԱԿ-ի մշակումների և գործունեության

համապատասխանությունը ESG չափանիշներին ցուցադրելու համար: Ինքնավերլուծության նպատակով իրականացվել են՝

- ՈԱԱԿ-ի՝ ENQA-EQAR-ի խորհրդատվությունների հիման վրա մշակված բարելավման պլանի կատարողականի գնահատում,
- Տվյալների հավաքագրում, ընդհանրացում և վերլուծություն,
- Փաստաթղթային հենքի վերանայում և թարգմանություն:

Ինքնավերլուծության զեկույցի նախնական տարբերակը քննարկվել է շահակիցների հետ և վերանայվել արձագանքների հիման վրա: Ինքնավերլուծության զեկույցի վերջնական տարբերակը 2021թ.-ի նոյեմբերին ներկայացվել է ENQA:

ՈԱԱԿ արտքային գնահատման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է: Ըստ պայմանագրում նշված ժամանակացույցի՝ փորձագիտական առցանց այցը ՈԱԱԿ նախատեսվում է 2022թ.-ի փետրվարին, իսկ ՈԱԱԿ-ի անդամակցության վերահաստատման վերաբերյալ որոշումը կլինի 2022թ.-ի սեպտեմբերին: EQAR-ում գրանցման վերահաստատման գործընթացը ըստ ժամանակացույցի պլանավորված է 2022թ.-ի հոկտեմբերին:

3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացների արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա՝ վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

Հաշվետու տարում.

- վերանայվել է ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը,
- մշակվել և հաստատվել է մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկման քաղաքականությունը,
- մշակվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի ապահովման և պետական հավատարմագրման կարգի նախագիծը,
- մշակվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի որակի ապահովման և պետական հավատարմագրման կարգի նախագիծը,
- մշակվել և հաստատվել է «ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենի ընտրության ընթացակարգը,
- մշակվել և հաստատվել է Արտակարգ դրության պայմաններում հավատարմագրման կազմակերպման և անցկացման ընթացակարգը:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է Ոլորտային որակավորումների շրջանակների մշակման աշխատանքներին և առաջարկությունների փաթեթ ներկայացրել իրավագիտության, ճարտարապետության, պատմության, գյուղատնտեսության, սոցիոլոգիայի, ֆիզիկայի, սոցիալական մանկավարժության ոլորտների վերաբերյալ:

IV. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

1. Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ն ակտիվորեն ներգրավված է եղել Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) և Որակի ապահովման եվրապական ռեգիստրի (EQAR) կողմից կազմակերպված միջացառումներին՝ ներկայացնելով որակի ապահովման ոլորտում առկա մարտահրավերն ու հաջողված փորձը:

2019 թվականից ՈԱԱԿ-ը ներկայացված լինելով ENQA-ի կառավարման խորհրդում ակտիվորեն մասնակցել է կառավարման խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպված վեբինարներին, այդ թվում հաշվետու տարում: Վեբինարներն ու միջոցառումները նվիրված են եղել միկրոորակավորումների որակի ապահովման մեխանիզմներին և միջազգային փորձին, հավատարմագրման գործակալությունների ներկայիս մարտահրավերներին և այլն:

ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) ընդհանուր վեհաժողովին և մասնակիցների ընդհանուր ժողովին: 2021թ.-ին համաժողովները ևս անցկացվել են առցանց միջավայրում: 2021թ.-ին ՈԱԱԿ-ը, ENQA-ի կողմից հրավեր է ստացել մասնակցելու «Շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում» առցանց քննարկմանը, որտեղ ՈԱԱԿ-ը ներկայացրել է ուսանողների ներգրավման իր մեխանիզմները, ստացել արձագանքներ գործընկեր գործակալությունների կողմից: Հաշվետու տարվա ընթացքում, ՈԱԱԿ-ն ուսանողներին որակի ապահովման գործընթացներում ներգրավվածության իր մոդելը ներկայացրել է նաև Ուսանողների եվրոպական ասոցիացիայի կոմից կազմակերպված վեբինարի ընթացքում:

2011 թվականից ՈԱԱԿ-ն անդամակցում է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE) և ներկայացված է կառավարման խորհրդում, 2017թ. նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ:

ՈԱԱԿ-ն ակտիվ մասանակցություն է ցուցաբերել ցանցերի կողմից կազմակերպվող միջոցառումներին և հանդես է եկել տարբեր զեկուցումներում ու քննարկումներում:

2021 թվականից սկսած ՈԱԱԿ-ն անդամակցում է Եվրոպական թրեյնինգ հիմնադրամին (ETF), որի նպատակն է աջակցել զարգացող երկներին վերանայելու ՄԿՈ համակարգը և համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին:

Անդամակցության շրջանակներում ՈԱԱԿ-ը պատրաստել և ներկայացրել է Հիմնադրամին ՄԿՈ հաստատությունների և համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը մասնակցել է Հիմնադրամի կազմակերպած առցանց միջոցառումներին, որոնք նվիրված են եղել Դուալ կրթության առանձնահատկություններին, ՄԿՈ հաստատությունների որակի ապահովման հիմնահարցերին:

2. Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի աշխատանքային խմբերին մասնակցություն

2019-2021 թթ. ՈԱԱԿ-ն ընդգրկված է Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբում (Bologna Peer Support Group on QA), որը նպատակ ունի նպաստելու անդամ երկրների լավագույն փորձի տարածմանը ողջ եվրոպական կրթական տարածքում: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը մասնակցել է համակարգող պետությունների կազմակերպած միջոցառումներին, մասնավորապես՝ շարժունության ծրագրերի ամփոփմանը:

2021 թվականի աշնանը մեկնարկել է Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբի աշխատանքների երկրորդ փուլը 2021-2024 թվականների համար: ՈԱԱԿ-ը խմբում նույնպես ներկայացված է: Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը կազմել է 2021-2024 թվականների աշխատանքային ծրագիրը, որը քննարկվել է ինչպես ՈԱԱԿ-ում, այնպես էլ ԿԳՄՍ-ն փոխնախարարի հետ: Ծրագրում ներառված են Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբի կողմից հայտարարված ուղղություններով ՀՀ ակնկալիքները: Աշխատանքների մեկնարկը կլինի 2022 թվականին:

2021թ.-ին ՈԱԱԿ-ը ներգրավվել է նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակին համադրելի եռաստիճան համակարգի թեմատիկ խմբում (EHEA TPG A QF): Հաշվետու տարում կայացել է թեմատիկ աշխատանքային խմբի առաջին հանդիպումը, որի շրջանակներում ձևավորվել են աշխատանքային խմբերը (self-certification, micro-credentials, short-cycle qualifications), կազմվել է ՀՀ գործողությունների պլանը տվյալ տիրույթում, ինչպես նաև մեկնարկել է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման գործընթացը: Իրականացվել է նախնական պլանավորում, մշակվել է գործողությունների ճանապարհային քարտեզը, տեղի են ունեցել մի շարք աշխատանքային քննարկումներ ՈԱԱԿ-ում և ՀՀ ԿԳՄՄՆ-ում:

3. Միջազգային ծրագրեր

ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր

2019 թվականից սկսած ՈԱԱԿ-ը որպես գործընկեր ընդգրկվել է EUniQ (Եվրոպական մոտեցման մշակում եվրոպական համալսարանների ցանցի համապարփակ որակի ապահովման համար) ծրագրում: «EuniQ» ծրագրի համակարգողը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունն

(NVAO) է: ՈԱԱԿ-ն ընգրկվել է ծրագրում որպես կառույց, որը հաջողությամբ կիրառել է Եվրոպական մոտեցումները երկրում որակի ապահովման համակարգի մշակման և ներդրման համար: «EUniQ» ծրագրի նպատակն է ճանապարհային քարտեզ ապահովել որակի ապահովման գործակալությունների համար, որպեսզի նրանք, հաշվի առնելով եվրոպական համալսարանների ցանցերի առանձնահատկությունները, տրանսազգային կրթությունը և համատեղ հավատարմագրումները, միասին որակի ապահովման համակարգի գնահատման այնպիսի մեթոդաբանություն մշակեն, որը կիրառելի կլինի բոլոր երկրների համար:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը մասնակացել է ծրագրի արդյունքում մշակված Եվրոպական համալսարանների որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ քննարկումներին, ինչպես նաև ամփոփիչ համաժողովին:

Էրազմուս + DEQAR CONNECT ծրագիր

2020 թվականից ՈԱԱԿ-ը ներգրավվել է Էրազմուս + DEQAR CONNECT ծրագրում: Ծրագիրը համակարգում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանը (EQAR): Էրազմուս + DEQAR CONNECT ծրագրի նպատակն է խրախուսել կրթության որակի ապահովումը և ճանաչումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

DEQAR CONNECT ծրագիրը կոչված է ընդլայնել արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների բազան (DEQAR) և ստեղծել միասնական շտեմարան՝ միավորելով գործընկեր բոլոր հավատարմագրման գործակալությունների բազաները, ինչպես նաև խրախուսել DEQAR-ի տվյալների օգտագործումը ճանաչման գործընթացում:

ՈԱԱԿ-ը DEQAR CONNECT ծրագրի թիմի երկու մասնագետների ուղղորդմամբ մշակել է հավատարմագրման գրանցամատյանը, որը փորձարկվել է 2020 թվականի վերջին: 2021 թվականին ծրագրի շրջանակներում մշակված հավատարմագրման գրանցամատյանն ամբողջությամբ թարմացվել է և ներառվել են հավատարմագրված բոլոր ՄՈՒՀ-երի վերաբերյալ տվյալներ:

Էրազմուս+ (SMARTI) ծրագիր

2021 թ.-ից ՈԱԱԿ-ը սկսել է իրականացնել Էրազմուս+ ՀԳ2 «Աջակցություն անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI) ծրագրով նախատեսված գործընթացները:

Ծրագիրը խթանում է Հայաստանում եռաստիճան կրթության ծրագրերի համար անգլերենով դասավանդման համապարփակ մեթոդաբանության մշակումը և կիրարկումը: SMARTI ծրագրի նպատակն է նաև աջակցել ծրագրի կոնսորցիումի անդամ հայաստանյան գործընկեր հաստատություններին (ՈԱԱԿ, ՀՀ ՊԿԱ, ՀԱԱՀ, ՇՊՀ, ԳՊՀ, ՎՊՀ)՝ իրականացնելու ՀՀ կառավարության կողմից առաջադրված պահանջները.

- անգլերենով դասավանդվող, կրթական աստիճան շնորհող ծրագրերի ներմուծմամբ խթանել աշխատաշուկայում ուսանողների մրցունակությունը,

- նպաստել հայաստանյան բուհերի ամբողջական ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք,

- բարելավել Հայաստանում բարձրագույն կրթության որակը և նպաստել դրա մատչելիությանը, անգլերենով դասավանդման արդիականացված մեթոդաբանության միջոցով խթանել բուհերի միջազգայնացումը:

Ծրագրի շրջանակում ստեղծվել է ներքին գնահատում իրականացնող աշխատանքային խումբ (IEWG), որը բաղկացած է գործընկեր հաստատությունների՝ ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ), Ռուսական ռեգիստրի (ՌՌ) և Ռիգայի տեխնիկական համալսարանի (ՌՏՀ) ներկայացուցիչներից: Ներքին գնահատում իրականացնող աշխատանքային խումբը գործընկեր հաստատությունների հետ սերտ համագործակցությամբ մշակել ու իրականացրել է ծրագրի շրջանակներում անցկացված ոլորտային ուսումնասիրության արդյունքների գնահատում, նաև մի շարք հանդիպումներ է կազմակերպել՝ մշակելու որակի ապահովման ռազմավարությունը:

2. Տարածաշրջանային համագործակցություն

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է սերտ համագործակցությունը տարածաշրջանի հավատարմագրման գործակալությունների հետ: Մասնավորապես քննարկումներ են իրականացվել Ռուսաստանի հավատարմագրման գործակալությունների հետ համատեղ հավատարմագրումների և փորձագետների փոխադարձ ներգրավման շուրջ:

ՈԱԱԿ-ը ներգրավվել է Ռուսական հավատարմագրման գործակալության կողմից կազմակերպված միջոցառումներին, հանդես է եկել զեկուցումներով, ինչպես նաև մասնակցել հավատարմագրման գործընթացներին:

V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

2021 թվականին ՈԱԱԿ-ը, ամփոփելով իր ռազմավարական ծրագիրը, մշակել է ճանապարհային քարտեզ 2021-2025 թվականների համար: ՈԱԱԿ-ը նպատակ ունի մինչև 2025 թվականը ունենալ տվյալների բազաներ՝ հավաքագրելով տվյալներ գործատուների, շրջանավարատների և ուսանողների բավարարավածության վերաբերյալ:

Որպես զարգացման մարտահրավերներ՝ ՈԱԱԿ-ն առանձնացրել է հետևյալը.

- բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների բարեփոխումներիին ուղղված գործունեություն. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի

ընդունմամբ պայմանավորված նոր մեխանիզմների և համակարգերի ներդրման ուղղված աշխատանքներ. մասնավորապես ծրագրային հավատարմագրման մոտեցումներ, նախնական հավատարմագրման գործընթացներ և չափանիշներ, միջին մասնագիտական կրթության որակի ապահովման նոր չափանիշներ, նոր մոտեցումներ, նոր գործիքակազմ,

- միջազգայնացման ուղղված գործունեություն. ՈԱԱԿ-ի առաջիկա տարվա նպատակն է վերահաստատել լիիրավ անդամակցությունըENQA-ին և կրկին գրանցվել EQAR-ում՝ դրանով իսկ ապահովելով իր կողմից տրված հավատարմագրումների միջազգային ճանաչումը,
- փորձագիտական ներուժի զարգացմանն ուղղված գործունեություն. ծրագրային և նախնական հավատարագրումների նախապատրաստման համար թիրախային վերապատրաստումների իրականացում, նոր մոտեցումների ծանոթացում և բավարար փորձագիտական բազայի ապահովմանն ուղղված աշխատանքներ,
- կառավարակազմակերպչական գործունեություն. ՈԱԱԿ կառուցվածքային փոփոխություններ, ֆինանսական, մարդկային, նյութական ռեսուրսների ավելացում, որակի ներքին ապահովման համակարգի բարելավումներ,
- պետական և մասնավոր ոլորտների կառույցների՝ լիազոր մարմին, կառավարություն, գործատուներ և այլն, հետ ակտիվ երկխոսություն, ֆինանսների ներգրավում, համատեղ ծրագերի իրականացում՝ հանուն կրթության որակի շարունակական բարելավման: